

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1.1. «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ ինստիտուտ) խորհրդատուների գործունեության կանոնակարգը սահմանում է ինստիտուտում խորհրդատուների ինստիտուտի ձևավորման, գործունեության շրջանակը:

**2. ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

2.1. Ինստիտուտի խորհրդատուի գլխավոր խնդիրն է՝ ակտիվորեն մասնակցել ուսանողների շրջանում կազմակերպվող ուսումնադաստիարակչական, մարզական և հասարակական աշխատանքներին, ունենալ խմբի հետ տարվող աշխատանքների միջոցառումների պլան, առաջադիմության և հաճախումների գրանցման մատյան:

2.2. Ինստիտուտի խորհրդատվական աշխատանքների կազմակերպման ղեկավարը նշանակվում է ռեկտորի հրամանով: Ֆակուլտետների խորհրդատուների ղեկավարները և խորհրդատուները՝ ըստ մասնագիտությունների, նշանակվում են մասնագիտական և տեսական ամբիոնների առաջատար և փորձառու դասախոսներից, որոնց առաջադրում է ֆակուլտետի խորհուրդը և հաստատում է ինստիտուտի ռեկտորը:

2.3. Խորհրդատուի գործունեությունը խմբում պետք է նպաստի առողջ մթնոլորտի և համերաշխ կոլեկտիվի ստեղծմանը, ուսանողների շրջանում դաստիարակի հայրենասիրության բարձր զգացում, սեր և հարգանք ինստիտուտի, ֆակուլտետի, ամբիոնի և ընտրած մասնագիտության նկատմամբ:

2.4. Ֆակուլտետների խորհրդատուների ղեկավարների և ըստ մասնագիտությունների խորհրդատուների աշխատանքը հանդիսանում է հասարակական աշխատանք:

2.5. Խորհրդատուներն իրենց ամենօրյա աշխատանքը պետք է զուգակցեն ինստիտուտի ուսումնական մասի, ֆակուլտետների, ամբիոնների, ուսանողական խորհրդի, մարզական ակումբի և հասարակական կազմակերպությունների հետ:

2.6. Խորհրդատուները ամիսը մեկ անգամ պետք է հաշվետու լինեն ֆակուլտետի խորհրդատուին, իսկ ֆակուլտետի խորհրդատուն՝ տարեկան 2 անգամ՝ ֆակուլտետի խորհրդին:

### **3. ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

3.1. Խորհրդատուն իրավունք ունի.

- 1) մասնակցելու կուրսերում և խմբերում կազմակերպվող արտադրական խորհրդակցություններին, մարզական և հասարակական միջոցառումներին,
- 2) ամրապնդել կապը ամբիոնների և խմբի դասավանդող դասախոսների հետ,
- 3) մասնակցելու խմբերի ավագների ընտրությանը,
- 4) ծանոթանալ ուսանողի անձնական գործի հետ,
- 5) մասնակցել ուսանողի տրվող խրախուսանքներին և տուժերի քննարկմանը:

3.2. Խորհրդատուների պարտականություններն են.

- 1) հետևել ուսանողների ուսումնադաստիարակչական, մարզական, կուլտուրկենցաղային և սոցիալական պաշտպանվածության խնդիրների լուծմանը,
- 2) աջակցել և հետևել խմբի ուսանողների վարձավճարի մուծման գործընթացին՝ համաձայն կնքված պայմանագրի ժամկետների,
- 3) նրանց հանձնարարել ուսանողին հասարակական աշխատանք՝ հաշվի առնելով նրա առաջադիմությունը, հակումները և հսկել դրա կատման ընթացքը,
- 4) օժանդակել շնորհալի ուսանողների ինքնագործունեության դրսևորմանը՝ ներգրավելով համապատասխան խմբակներում,
- 5) լրացնել խմբին վերաբերող իր մատյանը, նշելով իր ողջ գործունեությունը և ուսանողների կողմից կատարված աշխատանքի բովանդակությունը,
- 6) զբաղվել ուսանողների ընթացիկ հաճախումների և առաջադիմության հարցերով,
- 7) ապահովել խմբի ուսանողների կազմակերպված մասնակցությունը քննություններին:

**ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ**  
**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ**  
**ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ**  
**ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ**

**2017-2018ՈՒՍ. ՏԱՐԻ**

| ԹԻՎ | ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ   | ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ           | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԴԱՍԱԽՈՍՆԵՐ                      |
|-----|---|----------------------------|--|
| 1   | Խորհրդատուների խորհրդատուների ընտրում և հաստատում   | հունվար                    | դեկան, խորհրդատուների խմբի ղեկավար ամբիոններ |
| 2   | Կազմակերպել խորհրդատուների խմբի հետ արտադրական խորհրդակցություններ:   | փետրվար 2018թ – մայիս 2018 | դեկան, խորհրդատուների խմբի ղեկավար           |
| 3   | Շաբաթը մեկ անգամ գրանցել խորհրդատվական մատիաններում մասնագիտական խմբի հաճախումները և առաջադիմությունը:          | ամեն շաբաթ                 | խորհրդատուների                               |
| 4   | Լսել առանձին ամբիոնների խորհրդատվական խմբի կատարած աշխատանքների մասին հաշվետվությունը դեկանատի խորհրդի նիստում: | տարվա մեջ 2 անգամ          | ամբիոնի վարիչ                                |
| 5   | Պարբերաբար կազմակերպել խորհրդակցություններ մասնագիտական խմբերի հետ:   | պարբերաբար                 | խորհրդատուների                               |
| 6   | Ստուգարքների և քննությունների հանձնման ընթացքում զբաղվել կազմակերպչական աշխատանքներով                           | տարվա ընթացքում            | խորհրդատուների                               |
| 7   | Լսել համապատասխան ֆակուլտետի խորհրդատվական խմբի ղեկարների հաշվետվությունը ֆակուլտետի խորհրդի նիստում:           | հունվար - հունիս           | խորհրդատվական խմբի ղեկավար                   |

